Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
մայիսի 26-ի N 764 - Լ որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐՆԵՐԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությունը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում արտոնագրային հավատարմատարների գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Արտոնագրային հավատարմատար (այսուհետ՝ հավատարմատար) է ճանաչվում այն ֆիզիկական անձը, որին մտավոր սեփականության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կանոնադրության համաձայն իրավունք է ընձեռվում ներկայացնելու ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակում (այսուհետ՝ գրասենյակ): Հավատարմատար է ճանաչվում Հայաստանի Հանրապետության այն կազմակերպությունը, որում աշխատում է առնվազն մեկ գրանցված արտոնագրային հավատարմատար:

3. Մտավոր սեփականության օբյեկտների համար որպես հավատարմատար կարող է որակավորվել Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն և բարձրագույն կրթություն ունեցող այն անձը, որը գրասենյակում հանձնել է համապատասխան քննություն և որակավորվել է որպես արտոնագրային հավա-տարմատար:

4. Որպես հավատարմատար չեն կարող գրանցվել գրասենյակի աշխա-տողները, ինչպես նաև այն անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության

օրենսդրությանը համապատասխան արգելվում է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

2. ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Հավատարմատարի գործունեության իրավունքն սկսվում է նրա գրանցման պահից:

6. Հավատարմատարը կարող է իր գործունեությունը սահմանափակել մտավոր սեփականության առանձին օբյեկտներով:

7. Հավատարմատարը կարող է գործել ինչպես ինքնուրույն՝ որպես անհատ ձեռնարկատեր, այնպես էլ ներկայացնել որևէ կազմակերպություն:

8. Հավատարմատարն իրավունք ունի ներկայացնելու իր հետ պայմանագիր կնքած յուրաքանչյուր անձի: Հավատարմատարի իրավասությունը հաստատվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագրով:

9. Հավատարմատարը լիազորագիր տված անձի կողմից իրեն վստահված տեղեկատվությունը պարտավոր է պահել գաղտնի, եթե լիազորագիր տվող անձից այլ հատուկ ցուցում չի ստացել:

3. ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՀԱՆԵԼԸ

10. Հավատարմատարը հանվում է գրանցամատյանից՝

1) իր դիմումի համաձայն.

2) եթե օրինական ուժի մեջ մտած դատական ակտով զրկվել է տվյալ գործունեությամբ զբաղվելու իրավունքից:

11. Հավատարմատարի գործունեության դադարեցման մասին գրասենյակը տեղեկություն է հրապարակում իր պաշտոնական տեղեկագրում:

12. Եթե հավատարմատարի գործունեությունը դադարեցվում է իր դիմումի համաձայն, ապա կրկնակի գրանցումը թույլ է տրվում առանց լրացուցիչ

որակավորման քննության, նրա գործունեության դադարեցման օրվանից երկու տարվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

26.05.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ